

Հ Ն Չ Ա Կ

ՄԻՆՉԵՆ ՈՐՏԵՂ ԵՆՔ ԿՈՍԵԼ

Տարին, որ անցաւ, կը շինի այն միշտ յիշատակելի տարիներից մէկը, որոնք ստացել են առանձին նըշանակութիւն մեր նորագոյն պատմութեան մէջ: Այն յեղափոխական գործունէութիւնից առաջացած դէպքերով հայոց կեանքում անցեալ տարին եղաւ մեծ հարուած թիւրք կառավարութեան և մեր ներքին թշնամիներին. նա եղաւ սոսկալի փորձութեան տարի յեղափոխականներին և ժողովրդի համար, որ տվինք հազարաւոր զոհերու Բայց այդ ամբողջ կուէ միջով երբ հայ յեղափոխականները ժողովրդի հետ միասին և սուլթանական կառավարութիւնն իր հայ արքանեակների հետ միասին երկու բանակի պէս միմեանց դէմ առ դէմ էին կանգնած և կատաղաբար հարուածում էին միմեանց, թնդանութների ու հրացանների թանձր ծխի միջով, արեան հեղեղների ու մարդկային կոտորածների միջով և կախաղանի սիւնների տակով հրեղէն գծով անցնում է և յաղթական հանդիսանում մի մեծ գաղափար, յեղափոխութեան գաղափարը, ժողովրդի դատի, իրաւունքների ու ազատման գաղափարը: Բոլոր արհաւիրքների միջով անցնելով այդ գաղափարն այսօր հասել է իր ամբողջ բարձրութեան, ստացել է այլ ևս անժխտելի ու գրական պատմական իրաւունք մեր կեանքում, տիրացել է հազարաւոր ու միլիոնաւոր հայ մարերի և իր իրականացումը ներկայացրել այլ ևս անխուսափելի ու անհրաժեշտ:

Ահա ձեզ մէկ անհրաժեշտ շրջանոց ապացոյց յեղափոխական գործունէութեան, յեղափոխական շարժման ամբողջ օգտակարութեան: Ի՞նչ ուրիշ գործունէութիւն կարող էր հասցնել ժողովրդի բարօրութեան գաղափարն այդպիսի զարգացման, այդպիսի յաղթական գերբի, այդպիսի անյաղթելի զօրութեան: Անցնելով կրակի օղակների միջով և արեան ճահիճներով արհամարհելով պոռոտախօսների շողակրատութիւնն ու շատախօսութիւնը և հակայեղափոխականների ու ամեն կարգի ներքին թշնամիների ու բաղաբազէտ կոչումների տված կատակերգութիւնը, յեղափոխական գաղափարը, իբրև ժողովրդի քաղաքական ու սոսկական ազատման արտայայտութիւն, անցաւ իր ճանապարհը քաղաքացեց, որ ինքն էր պատմական միակ միջոցը ժո-

ղովրդի փրկութեան: Եւ յեղափոխականների գործունէութեամբ այդ գաղափարն առաջադրեց այնպիսի հետևանքներ յօգուտ ժողովրդային դատի, որ այսօր ամբողջ աշխարհում այդ դատը դարձել է օրւայ ամենաայրող խնդիր: Այդ բոլորը տեսնելով շուարած ու ապշած են մնացած այն հայերը, որ դեռ մինչև վերջին տարին յիսեղիատակ, շաղակրատ, սղայ՝ էին անուանում յեղափոխականներին: Եւ ինչ. համոզված մեր գաղափարի իրական ու պատմական ճշմարտութեան մէջ մեր, հակառակ ամեն դժուարութիւնների ու կորուստների, հարուածների ու յարձակութեան, գրեթէ մենակ մնացած մեր ամբողջ կուսակցութեամբ, մեր սեփական ոյժերով, ոչ մի կերպ գրեթէ օգնութիւն չը ստացած հայ, հասարակութեան կողմից, բացի հակառակութիւնից, մեր շարունակեցինք մեր ճանապարհը, մեր յարատեցինք և հասանք այն կէտին, որ մեր գործի ու մեր գաղափարի առջև այսօր խոնարհում է մէկ ամբողջ ազգ: Եւ որքան խոպոտ են ու գրեթէ անլսելի են դարձել այն դիմակաւորների ձայները, որ այս կամ այն անխոստովանելի դիտումներով իրանց միակ գործն են դարձրել՝ յարձակվել մեր գործունէութեան, մեր ամբողջ կուսակցութեան վրայ: Եւ որքան իզիտու, տխմար կամ քնից նոր զարթնած պէտք է նրկատվէ այն մէկը, որ այսօր յանդգնէ ձայն բարձրացնել յեղափոխական գաղափարի դէմ:

Յեղափոխականներին բացարձակ գործունէութեան, յեղափոխական շարժումների սկզբից մինչև այժմ ահա արդէն հինգ տարի կայ, մեր եղել ենք ենթակայ անընդհատ հալածանքի երկու կողմից. մէկը թիւրք կառավարութեան և միւր՝ հայ հակառակորդների: Մինչդեռ առաջինը, չգալով թէ ինչպիսի փոթորիկներ են իրան սպառնում, ամեն ջանք գործ էր դնում խեղդել յեղափոխական շարժումները, միւսները, հայ հակառակորդները, կարծես դաշինք կապած առաջինի հետ, մեր ամեն մի բացայայտ գործն ու շարժումը ներկայացնում էին անմիտ, վատասակար, ազգակործան: Այդպիսիներին մեր մշտական պատասխանն էր, թէ եթէ անկեղծ էք, դուք էլ գործեցէք, ասպարեղք լայն է, և այնտեղ, արեան դաշտում է անկեղծ կուռղների ժամադրաւայրը և միութեան ուխտի տեղը: Իսկ եթէ այդ շանք, շատխօսեցէք որքան որ կուզէք, կապրէք և շատ բան կը տեսնէք:

Իւ նրանք մշտ շարունակել են իրանց վատասակար...

չատակսուծիւնը, և ամեն անգամ, երբ ժողովուրդի մէջ նկատվել է րոպէական վճատութիւն ու անվտանգութիւն յեղափոխականների նկատմամբ, նրանք, մեր ներքին հակառակորդները, օգուտ քաղելով այդ պարագայից, կրկնապատկել են իրանց յարձակումները մեր դէմ: Իսկ երբ, ընդհակառակը, տեսել են, որ յեղափոխական մի մեծ դէպքի շնորհով ժողովուրդը գրավել է յեղափոխականների գործունէութեամբ, հայկական դատը նորանոր քայլեր է արել դէպի առաջ և այլ ևս դժուար է եղել մաքառել յեղափոխականների ժողովուրդականութեան դէմ, — այդ ժամանակ մեր հակառակորդները, որ կուէի միջոցին միայն կատաղաբար հայածել գիտեն գործիչներին, իրանք էլ շտապել են հազնել գործիչի դիմակ և պօռալ, կանչել ու իրանց կարևորութիւն տալ: Այդպէս է եղել միշտ նրանց ընթացքը: Հասանդրի՞ր դերասաններ: ... Նրանք տեսան այժմ, որ, հակառակ իրանց յարձակումների, յեղափոխական գործիչները մինչև որ աստիճան զարգացման հասցին հայկական դատը:

Կրանք տեսան այդ: Նրանք տեսան նաև, որ մենք ոչ մի գոհորութեան տուջև չը կանգնեցինք և մեր բոլոր մտաւոր, հոգեկան ոյժերը, մեր կեանքը դրինք ժողովուրդի փրկութեան խորանի վրայ: Այո, այդ ամբողջ գործունէութեան միջոցին հազարաւորներ թիրբական բանտերը Լքցին: Զարբանցներ, Զէնկիւճեսններ, Մանիսաճեաններ, Միսասեաններ տանեակներով նահատակվեցան, և տպանեակներով բանտերում մեռան: Ծառուկեաններ, Կիւլպէնկներ, Մարգարներ, Ժիրայր Պոյաճեաններ, տանից աւելի, կախողան հանվեցան, բոլոր յեղափոխական հերոսներ, բոլորը շնչակեան ընկերներ: Այո, յեղափոխական ամբողջ գործունէութեան միջոցին հարիւրաւորներ կոտորվեցան, Սասունի վեց հազար կտրիճների, կիների ու երեխաների հերոսական մահի զանգակի եղբրական զոհանջներ թնդաց ամբողջ աշխարհում: Այո, այդքան գոհույութիւն, այդքան կորուստ, այդքան արեւն ... Բայց ո՞վ կարող է ձայն բարձրացնել, թէ այդ բոլորը զուր կորուստ էր, թէ մի ստրուկ լազգի փրկութիւնն առանց արեան կարող է լինել: Այո, կորուստներն ու արհաւիրքները, երբ անմեղ մանկան արիւնը ներկում է ծերունու դիակի կնճռոտ ձակատը, երբ իր բոցով կինը փաթաթում է ամուսնու մահացու վէրքը և նրա հրացանն առնում ձեռքը ու նետովում կուէի փոթորկում, — այդ ամենը ձակատաբրական են, անխուսափելի են այն ժողովուրդի համար, որ դուրս է եկել ասպարէզ ձեռք բերելու իր ազատութիւնը:

Ինչ այդ ամբողջ յեղափոխական գործունէութիւնն ու դէպքերը չեն արդեօք, որ այսօր ստիպեցին Եւրոպային ու Ամերիկային ուշադրութիւն դարձնել և յուզվել այն սարսափելի անցքերով, որոնց թատրն է շալաստանը, այն ստակալի դրութեան վրայ, որ ունի հայ

ժողովուրդը: Ենդափոխական գործունէութիւնն ու շարժումները չեն արդեօք, որ սպառնալով Եւրոպայի շահերին, հարկադրեցին նրան քննութիւն բանալ և լուծման մասին մտածել այն խնդրի, որը 16 տարիեց ի վեր ընկած է նրա դիպլոմատական սեղանի վրայ բոլորովին մոռացված:

Ի այց այստեղ կանգ առնենք: Այն շատը, որ արինք ժողովուրդի հետ յեղափոխական ասպարէզում, դեռ քիչ է նոյն ժողովուրդի փրկութեան համար: Զը դնենք մեծամեծ յոյսեր Եւրոպական քննութիւնների վրայ, չը յափշտակվենք և չը կարծենք այժմեանից, թէ վերջապէս լուծում կը ստանայ այնքան բարդ կերպարանք ստացած հայկական դատը: Եւրոպական տէրութիւնների կողմից նշանակված քննութիւնները մի թղթախաղ է Թիւրքիայի հետ: Թուղթ խաղացող այդ երկուսից որ մէկին ընկաւ գլխաւոր աւր, նա կը հանդիսանայ տանողը, թէկուզ դրանից անարդարութեան ու թուղթ խաղացողների շահանդրութեան զոհ զնայ հայ ժողովուրդը: Զը յափշտակվենք Եւրոպական այս կամ այն տէրութեան սիրահարական ժպիտով, որ ուղղում է նա դէպի հայը, որպէս և առանձին հաւատ չընծայենք նրա բարկացայտ նայուածքին, որ ուղղել է նա դէպի թիւրքը: Ինչ որ նա անում է և կանի կը լինի միայն իրան համար: Նա մի խորթ մայր է, որ երեխային համբուրած ժամանակն էլ խածնում է նրա այտը: Նրա մեղ պաշտպանելն այն կախարդութիւնն է, որ յայտնի հանգամանքներում կարող է վերջանալ մեզ համար — ոչնչով, իսկ իրան, Եւրոպայի, համար — մեծ օգուտով:

Կերկայ շլոթ ժամանակներում զգուշանանք նմանապէս Եւրոպայում երևան եկած մի քանի օտար հասլաւներեցից, որոնք աջ ու ձախ ձառեր խօսեցող հայկական խնդրին իրանց համար իսկապէս շահագործութեան ու շահանդրութեան առարկայ են դարձրել: Հայերի դրամն այդ տեսակ հայաստեաններն է, որ պէտք է սովէ, այլ այն տառապող ժողովուրդին, որ այսօր ազատութեան համար կռակի մէջ կուռում է թշնամու դէմ և որ նիւթապէս մնացել է անօգնական և այդ պատճառով անզէն, անպաշտպան: Ազգի առջև յանցաւոր են այն իրանք իրանց հայրենասէր անուանողները, որ սնափառութեամբ դողված, միայն փայլելու համար իրանց դրամը տալիս են կասկածաւոր հայաստեաններին: Հայրենասէրներ: ... Ոչ — սնափառ դերասաններ: ..

Մեր ուղին դժված է երթանք միշտ առաջ հէնց նոյն յեղափոխական ընթացքով, որ հայկական խնդրն իր ներկայ հասուն վիճակին բերաւ և որ մէկ օր մեզ կը տանէ մինչև մեր նպատակը: Ընթանալ այդ ճանապարհով կամ փոքր մեր յեղափոխական ամբողջ եռանդի, յեղափոխական ամբողջ մտքի մղումով, որ միշտ յինվելով որոշ սղզբունքների ու ժողովուրդի պահանջների վրայ, աւելի կըն-

դարձակէ գործունէութեան ծաւալը, աւելի կը ստուարացնէ յեղափոխական զօրութիւնը, աւելի կը շտապնէ մարտնչողներին կարգերը, ուր այժմ արագարար մտնում է արդէն մէկ ամբողջ ժողովուրդ: Դա է ճշմարիտ եղանակը յեղափոխական գործունէութեան: Յեղափոխական գաղափարը երէկ անյայտ, այսօր արդէն ընդհանրացել է և տիրել միլիոնաւոր սրտեր: Այդպիսի բոլոր խորհրդաւոր բոլոր է: Այդպիսի յաղթութիւնը փառաւոր յաղթութիւն է: Դրանից յետոյ այդ գաղափարի իրագործումն այլ ևս ճակատագրական է: Դա գաղափարի անընկճելի ոյժը, ծնված ժողովրդի կենսական պահանջներից և միացած իրերի ընթացքի հետ, այլ ևս կը մղէ ժողովրդին մինչև իր նպատակի իրագործումը: Թող իւրաքանչիւր հայ, յոյսը դրած հարազատ ժողովրդի քաջութեան վրայ, կատարէ այն բոլոր պարտականութիւնները, որ ունի նա դէպի այդ ժողովուրդը: Թող ամեն կերպ օգնեն նրանց, որոնք կուր գաշտում կանգնած են մահի դիմաց: Իւր այն ժամանակ կը խորտակվէ այն ահաւոր ու սոսկալի լուծի հոյակապ շէնքը, որ այսօր բանտ է հայ ժողովրդի համար:

Ն Ո Ր Ը Ն Տ Ի Ր Պ Ա Տ Ի Ր Ա Ր Ք Ը

Թէ հայութիւնը եւ թէ եւրոպական, գլխաւորապէս անգլիական, մամուլը հետաքրքիր ուշադրութեամբ դիտում են Վ. Պոլսի նորընտիր պատրիարքի իւրաքանչիւր քայլը: Մենք կարող ենք աւելացնել, թէ ոչ միայն հետաքրքիր, այլ և համակրական է այդ ուշադրութիւնը, ըստ որում անգլիական թերթերը բացարձակ կերպով գովում ու քաջալերում են պատրիարքին: Ահա՜ իր առաջին խօսքից, երբ պատրիարքն իր ձառում պարզեց իր հաւատարմութեան երդման իմաստը, որով ազգային շահերի ջատագով էր իրան ներկայացնում. ապա իր տեսակցութեամբ սուլթանի հետ, երբ Սասունցիների թագակիր զահապետը չը կարողացաւ շարունակել լսել նրա դառն ու արգարացի խօսքերը. յետոյ նրա ինքնուրոյն ու բացարձակ յայտարարութիւնները, թէ իր կողմից պատգամաւոր պէտք է ուղարկէ Սասունի դէպքերը ընենլու. վերջապէս իր վերջին գործը, որ սուլթանի կողմից իր մերժված նամակը նա կրկին անգամ նոյնութեամբ ուղարկում է կատաղած միտպետին, — իր այդ ամբողջ ընթացքով նորընտիր պատրիարքը, արդարև, հաստատեց սուլթանական կառավարութեան հետ ներսէս պատրիարքից ի վեր չը տեսնված մի յարաբերութիւն: Նա ներկայացաւ իրրև մէկ ինքնուրոյն, անկախ դիրք ունեցող անձնաւորութիւն սուլթանի կառավարութեան առջև. նա նաև միանգամից որոշեց իր դիրքը դէպի ազգը: Այդ բոլորի մէջ նկատելի է այն գլխաւոր կէտը, որ մեր ամբողջ բարձրաստիճան հոգևորականութեան մէջ այսօր նորընտիր պատրիարքը միակն է հանդիսանում, որ, թուում է մեզ, ամենից առաջ իր վրայ նայում է ոչ իբրև մի հոգևորականի վրայ, այլ իբրև ազգի մի բարձրաս-

տիճան պաշտօնեայի (րայ) պարտաւոր ճանաչելու և հսկելու ազգի ընդհանրական շահերը: Միև կողմից իր վրայ նա պէտք է նայէ իբրև մի մարդու վրայ, որ պարտաւոր է կատարել իր ազգային զգաւմարդկային պարտականութիւնները, օգուտ քաղելով իր բարձր դիրքից:

Ամենքին յայտնի է, որ մենք արդէն սկզբունքով ոչ մի գուրգուրանք չունենք հոգևորական դասի համար, ևս առաւել երբ այդ սկզբունքի ճշմարտութիւնն անպարտաւորութեամբ է հոգևորականութեան ընթացքով: որպէս և այն բարձրաստիճան հոգևորականների գործերով, որոնք վերջին տասը տարւայ միջոցին իրանց դժուրային հոգիով միայն դժոխային դաւեր էին լարում ընդդէմ հայ ժողովրդի և մասնաւորապէս հայ յեղափոխականներին: Բայց երբ այդ անպակասած հոգեւորականութեան մէջ մենք տեսնում ենք այնպիսի լուսաւոր կէտեր, որոնց վրայ մեր աչքը կարող է քիչ հանգիստ առնել, այդ կէտերը, այդպիսի հոգևորականները մեզ համար կորցնում են իրանց հոգևորական կերպարանքը եւ հանդիսանում են իբրև ճշմարիտ մարդ, ըմբռնող ընդհանրութեան շահերը, պաշտպան դրանց և այդ պատճառով իրանց ձեռքին գործիք դարձած յօգուտ ազգի իրանց բարձր դիրքն ու պաշտօնը:

Նորընտիր պատրիարքն այսօր միանգամից ձգտում է իրան բարձրացնել այդ կէտի վրայ: Ներկայի քաղաքական ու ազգային հանգամանքներն աւելի, քան նպաստաւոր են նրա այդ ձգտման: Ի՞նչ, յիշուի, նա կամքի տէր է և իր մինչև հիմա արածը բղխած է մէկ անկեղծ ու խորին համոզմունքից, նա պէտք է աւելի եռանդով ու զօրութեամբ շարունակէ իր բռնած ընթացքը: Հայկական խնդրի այժմեան ամենահասուն բոլորէին նրա համար ընդարձակ ասպարէզ ու պարտաւոր հող կայ՝ ձայնակցելու ժողովրդին և օգտակար լինելու հայկական դատին: Նա ունի իրաւունքներ, որ ոչ մի հայ չունի. թող իր այդ իրաւունքներից օգուտ քաղէ: Նա ունի մեծամեծ պարտականութիւններ դէպի իր ժողովուրդը, թող կատարէ նրանց. նա սկսել է այդպէս ընթանալ թող շարունակէ: Եւ միևնոյն ժամանակ թող չը մոռանայ երբէք, որ եթէ իր ներկայ ընթացքը փոխէ, նոյն ժողովուրդը կարող կը լինի նրան վայր գլորել և այդ անկումը կը լինի աւելի սոսկալի, քան Յարութիւններինը, քան Ալըգեաններինը: . . .

Ա.

Թ Գ Թ Ե Կ Յ Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ի

ՆՍՐԱՆԵՐ ԹԻՐԱՔԱՆՅԵՑ

Կ Ի Լ Ի Կ Ի Ա

2 Յունվարի 95.

Մտանայի եւ Հալէպի կեդրոնական բանաւորաւած հարեւաւոր անմեղ հայեր ի լրոյ կիմանանք թէ պիտի դատապարտուին: Այսօր Պ Է Լ Է Ն Կ Է Ն տարին 10 հոգի եւս, որոնց մէջն է տեղւոյն ծերունի քահանայ տ. Նշանը. եկեղեցին գոց է, նոյնպէս դպրոցը 7 ամիսներ:

ու է վեր, 400 տնուր գիւղ մ'է: Սիս, Ղարապազար, Օձագը, Նաճարը Հայ գիւղերը տեղական բարբարոս թաքաց ձեռքէն սոսկալի հայրածանք եւ անարգանք կը կրեն: Արիւնիոյ մէջ շարս մեծ վանքեր գոց են արդէն, որոնց վանահայրերը արքայութեամբ ու բանտարկուած են: Չոր-Մարգուանի դպրոցը գոցեր է կառավարութիւնը, առարկելով թէ ֆերման չունի: Սոյ կաթողիկոսը վախճանելէն անմիջապէս յետոյ Հալէպի կուսակալը գրաւեց անոր ամբողջ թղթերն ու անձնական սոսանքները ըստ եպարքոսական հրամանի: Պոյսոյ վաթջ կողմանէ եպիսկոպոս մը որոշուած է Արիւնիոյ կաթողիկոսին փոխանորդ այս սոգէտ եպիսկոպոս մ' է որ կիլիկիացուց ծանօթ է իր բազմակողմանի տգիտութեամբը եւ արծաթասիրութեամբը: Սա մտերիմ բարեկամ է միանգամայն Նազըմ պէյին, որոյ շնորհիւ սուլթանին շնորհն ստացած պաշտօնական թղթերով Արիւնիոյ կուսակալ եղեր. ինչ որ ալ լինի շատ կարճ պիտի տևէ իր պաշտօնավարութիւնը: Արդէն Ատանայէն, Մարաշէն եւ ուրիշ մի քանի կարևոր տեղերէ հեռագրուած է նորընտիր պատրիարքին, որպէս զի այդ եպիսկոպոսը չի զոհուի: Կառավարութիւնը սկսեց է առ ահի Զէյթունի եւ Հաճնոյ կողմերը ամբացնել նոր զինուորաց զունդերով: Սասնոյ խնդրը նոյն իսկ տեղական թուրքեր կը խօսակցին եւ այլ եւ այլ տարածաշրջաններու խեղճութիւնը կուզեն այն ճշմարտութիւններն ու իրականութիւնները, զորս կը գրեն եւրօպական լրագիրք:

Ալէքսանդրէտի մարտատունը սաստիկ հրամանագրեր եկած են որպէս զի մանրագնին խուզարկութիւնք կատարուին. ինչ որ կելէ այս նաւահանգստէն, գրքի եւ թղթի կտորիկն անգամ, ամենագրուչութեամբ կը զոհուի Հալէպ ի քննութիւն:

Տարսնի հայոց գերեզմանատունը որ շատ թանկագին վայր մըն էր, այս օրեր Ատանայի կուսակալը գրաւած է և դրան բանալին առած է ըսելով թէ այսպիսի շէնքեր կառավարութեան կը վերաբերի, որովհետև այդ գերեզմանատունը պարսպապատ է և կըսուի թէ Սարդանապաղի ժամանակէն մնացած հնութիւն մըն է: Նոյնպէս Հալէպի կուսակալը գրաւեց հայոց սեփական 200 ոսկինոց արտավայր մը որ դատի տակ էր:

ՄԵՂՈՒ:

20-Ք-ՄԱՐՁՈՒԱՆԻ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՆՐԱՄԱՍԻ
ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ, — ՆՈՐ 2ԵՐԲԱ-
ԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ ԲԷՅԼԱՆԻ ԵՒ
ՂԵՐԵՒ-ԽԱՆԻ ՄԷՁ.

26 նոյեմ. 94, Արիւնիոյ

Ձեզ գրել եմ արդէն Գարանլըգ-Գափուի դէպքը, ինչպէս եւ Օձախլի կոտորելը թիւրք կառավարութեան ու խուճանի կողմէ: Այս անգամ պետք է նրկարագրեմ այդ դէպքէն վերջ Չոր-Մարգուանի մէջ կատարուած խուզարկութիւններու եւ ձեռքարկութիւններու ստոյգ մանրամասնութիւնները, որոնք կատարուե-

ցան նոյն թիւրք կառավարութեան եւ խուճանի կողմէն մի քանի ազգադաւ հայերու անտեղի զոհարտութեամբ ու մասնութեամբ:

Նոր կոնսցին Օձախլըն, կառավարութիւնը խուարկեց հայերու մեծամասնութեան տները եւ ժողովեց զանոնց բոլորի զէնքերը: Յետոյ ձեռքարկեց այդ օրեր այդ գիւղէն բացակայ եղող՝ Գ Է Ո Ր Գ Տ Է Ր Պ Օ Ղ Ո Ս Ե Ա Ն եւ Չ ա Ք ա Ր Ի ա Պ ա Ղ Ե ա Ն երիտասարդներու ծնողները եւ սաստիկ նեղեց ծեծի ու սպառնալիքի տակ, պահանջելով որ այդ երկու երիտասարդներուն ուր ըլլալը յայտնեն եւ կամ իրենց յանձնեն: Ծնողները յայտնեցին, թէ իրենց զուակները երբէք գիւղի մէջ պահուած չեն, այլ ութ օր առաջ առեւտուրի գործի են գնացեր եւ հարկաւ մօտ օրերէն կը վերադառնան: Չերբակալած էին նաև Չոր-Մարգուանի աղաներէն երկուսը. դիւղապետ Գ Է Ո Ր Գ Է Ֆ Է Ն Ս Ի Կ Ե Օ Կ Օ Ղ Լ ա Ն Ե ա Ն եւ Մ ա Ն Ո Լ Կ Է Ֆ Է Ն Ս Ի Պ ա Ղ Ե ա Ն ը: Կառավարութիւնը խիստ ճշուճ բանեցուց ատոնց վրայ ալ, որ ստորագրեն մի մուրհակ կարծեցեալ ասպատակները ձերբակալելու եւ կառավարութեան յանձնելու համար: Սակայն այդ աղաները կընդգրկմանն ստորագրել մուրհակն, յայտնելով, որ իրենք այդ տեսակ գործերու միջամուխ եղած չեն բնաւ, որ գիտնան թէ ո՞վքեր են ասպատակներ եւ ո՞ր տեղ կը գտնուին. կը պատասխանեն միայն թէ, եթէ պատահամբ լուր առնեն այդ տեսակ ասպատակներու, իմաց կը տան:

Նոյն ձերբակալութենէ երեք օր յետոյ, վերոյիշեալ Գ Է Ո Ր Գ Է Չ ա Ք ա Ր Ի ա երիտասարդները դառնալով իրենց գործերէն, կիմանան կառավարութեան խնդիրը եւ անձամբ կերթան յանձնուիլ կառավարութեան յայտնելով թէ, որք մեզ կը փնտռէք եղեր, ահա մենք եկանք. արդեօք ի՞նչ խնդիր ունիք իմանալու մեզնէ...⁶ Կառավարութիւնը փոխանակ գուշակելու ազոնց անմեղութիւնը իրենց պարզմտօրէն յանձնուելէն, խիստ տանջանքի տակ կալանաւորեց զանոնք եւ ուղարկեց Ատանա, ինչպէս ձեզ գրած ենք առաջ, իսկ Գ Է Ո Ր Գ Է Մ անուկ էֆէնտիները ազատ արձակեց:

Կառավարութիւնը չի գոհացաւ սակայն այդ երկու ձերբակալութիւններով որովհետեւ երկու երիտասարդներու Ատանա զոհուելէ մի քանի շաբաթ վերջ իմացաւ, որ ազոնք անմեղներ են եւ խնդրի բուն աղբիւրը անծանօթ տեղէ է բղխած: Այն տաճիկ ջորեպանն, որ կալանաւորեալ ուսանողը կը տանէր ոստիկաններու հետ Ատանա, ֆայասի մէջ ճնշման ու խոստումներու տակ կը խօսի, թէ զարնողներն վերոյիշեալ երիտասարդներն էին. բայց երբ Ատանայի կուսակալութիւնը յիշեալ ջորեպանը Ատանա կը կանչէ, այնտեղ բացարձակապէս կը յայտարարէ, թէ ինքը չի ուզեր զոհուիլ Մուհամմէտի ճէնէթէն սուտ խօսելով, ինքը այդ երկու երիտասարդները երբէք չէ տեսած այն օրը Գարանլըգ-Գափու: Կառավարութիւնը հասկացած է թէ պէտ այդ երկու երիտասարդներու անմեղութիւնը, բայց չուզեր միանգամ ձեռքն ինկած որսը առանց դրամի արձակել, երկուսէն 30 ոսկի կը պահանջէ, բայց ուսկեց, — հետեւապէս կը մնան դեռ բանտի անյայտութեան մէջ:

Այն յարձակումը որ կառավարութիւնը ըրաւ Օձախլի վրայ, չի յաջողեցաւ ընել Չոր-Մարգուանի վը-

բայ, բայց ազգադաւ մասնիչները ջլատեցին հայերու միացած ոյժը, մէկիկ-մէկիկ մասնելով կառավարութեան եւ տեղեկագրելով ինչոր իրենք գիտէին երեւակայական կերպով հայերի յեղափոխական ձգտումներու մասին: Այդ ծանօթ ազգակործան մասնիչներն են Օհաննէսէս Էֆէնտի Պալեան եւ Մեսրոպ քահանայ Ապուսէյֆեան: Այս երկուքը ի իսպառնանա մէ (տեղեկագիր) կը մատուցանեն կառավարութեան, որ Չոր-Մարգուանի մէջ շնչակեան յեղ. կուսակցութեան մասնաճիւղ կայ, յայտնութիւններ, որոնց շատերը շինծու զբարտաութիւններ էին: Այդ ինպարնամէի մէջ մի քանի երիտասարդներու եւ մարդերու անուններ: Այդ տեղեկագրի թելադրութեամբ Օհաննէս Էֆէնտին կը մատնէր իր հարազատ եղբայրը Մանուկ Էֆէնտի Պալեան եւ իր ազգական Գեորգ Էֆէնտի Կեօկօղլանեան, որպէս այս գործերի հեղինակները, որոնց կառավարութիւնը ազատ արձակելէ 20 օր վերջ՝ երկրորդ անգամ ձերբակալեց եւ ուղարկեց Ատանա: Ատանց գնալէն մինչեւ 20 օր կառավարութիւնը ձեւացնելով թէ այլ եւս խնդիրը մարեցուցած է եւ չի ուզեր խուզարկութիւններ ու ձերբակալութիւններ կատարել — սա՛ հայերը մշտական յուզման եւ գրգռութեան չենթարկելու համար էր — ոչ մի նոր դէպք չի պատահեցաւ: Բայց օր մը յանկարծ 10 ոստիկաններով կոխեցին Քիւլիւք-Սարգիսեանն եր ու տունը եւ խիստ կերպով խուզարկեցին երբ տանտերերն ալ ներկայ չէին, ժողովեցին ասոնց զաւակներու դասական գրքերը եւ տարին: Քիչ յետոյ ձերբակալեցին Չոր-Մարգուանի շուկային մէջ այդ տան զաւակ Հայկակ Քիւլիւք-Սարգիսեանը, 24 տարեկան զարգացած երիտասարդ վաճառական, եւ տարին Փայաս: Աւթ օր վերջ ձերբակալեցին ասոր մեծ եղբայր հաճի Յակոբը եւ ընկերացուցին իր եղբոր: Ասոր գնալէն վեց օր յետոյ՝ կառավարութիւնը չի գոհանալով ստացած 35 ոսկի կաշառքէն՝ կալանաւորեց երկու եղբայրներն եւ ուղարկեց Ճէպէլի միւթէսարըֆութեան: Փակագծի մէջ ասներ, որ կալանաւորներն միմիայն կիրակի օրեր կը տանէին, յայտնի համարձակ շուկայի մէջէն անցնելով թիւրք խուժանի հետ, վիրաւորելու համար հայերու կրօնասիրական զգացումը: Խստիւ արգիւրած էր ծնողներուն մերձենալ կամ խօսիլ իրենց զաւակներուն հետ:

Ատանց գնալէն 12 օր յետոյ, 18 ոստիկաններ կոխեցին Թանկապագեան Պօղոսի տունը եւ խիստ կերպով խուզարկեցին: Սա մատնուած էր իբր զէնքերու եւ ռազմամթերքի վաճառող եւ հայթայթող յեղափոխականներու համար: Բայց կառավարութիւնը երազախաբ եղաւ, երբ խուզարկելով ասոր տունը գըտաւ միայն 100 տրամ վառօթ, 20 կապար, մի վեցհարուած եւ մի նախնական ոչինչ հրացան: Ընդամենը ասոնք են, որոնք գրաւելով կալանաւորեց նաև տան տէր Պողոսն եւ տարաւ Փայաս: Հինգ օր բերդի նըկուցներու մէջ չարաչար տանջելէ յետոյ վերջին երեկոյին՝ կառավարութեան պաշտօնեաները կը հրաւիրեն Պողոսին իրենց հետ ծովի տփը ման գալ երթալ: Ողորմելի բանտարկելը գուշակելով կատաղած պաշտօնեաներու շար գիտաւորութիւնը, որ ի հարկէ ինքը ծովու մէջ պալլը գէժինի (ձուկերու պահապա-

նութեան պաշտօնեայ) պէտք է շինէին, կը հրաժարի այդ հրաւերն ընդունելէ եւ կը պատասխանէ, թէ դեռ բանտարկեալ եմ եւ գործ չունիմ ծովու ավիր. եթէ դուք ինձ շատ կը հոգաք, արձակեցէք ինձ, որ տունըս գնամ քանի որ անմեղ լինելու ալ գիտէք: Պաշտօնեաները կը բռնադատեն կրկին ու կրկին ծովափը գնալու համար. բայց հայը յամառելով եւ գրկելով բանտի դուռը կը պատասխանէ. դահա՛ այստեղ եմ եւ պէտք է մնամ այստեղ. եթէ կուզէք սպաննեցէք ինձ հոս, ես չեմ ուզեր ծովու մէջ խայտառակ կերպով անհետանալ. ես դուրս չեմ գար այստեղէն:»

Պաշտօնեաները տեսնելով որ անհար պիտի լինի առանց սպաննելու դուրս հանել այդ յամառ կեալուրն եւ իրենց գործին չի գալով բերդին մէջ սպանել յաջորդ օրը, նոյնպէս կիրակի, կը տանին Ճէպէլ քանի որ հայն ալ առջի իրիկուայ պատահած դժբաղդութիւնը շուտ իմաց էր տուեր իր ազգականներուն պաշտանութիւն փնտռելու համար:

Ասոր տանելէ 15 օր վերջ ալ ձերբակալեցին եւ Փայաս տարին Գասպար Կեօկօղլանեան, ուր կը մնայ մինչ ցարդ ծանր տանջանքներու ներքեւ. ասոր տունը խուզարկեցին եւ ինքն ալ կալանաւորեցին, որովհետեւ կարծեցեալ ասպատակ Գեորգ Տէր-Պողոսեանի փեսան է:

Չը մոռանանք գրել նաև որ այս ձերբակալութիւններու ամենէն առաջինը կատարուեցաւ մի յոյնի վրայ: Ոստիկաններու զարնուելէն երկու օր վերջ ձերբակալեցին Չոր-Մարգուանի Վասիլ անուն սափրիչն, որպէս թէ սա եղած ըլլայ ոստիկանները զարնողներէն մէկը: Թիւրք յոյնը նոյնպէս մէկ ցարդ ծանր տանջանքներու ներքեւ կը մնայ Ատանայի բանտի մէջ: Եւ ինչո՞ւ կառավարութիւնը իր կատաղութիւնը չի թափէ յոյների վրայ ևս. միթէ Յոյները չէն, որ շնչակեան յոյների վրայ ևս. միթէ Յոյները չէն, որ այդպէս տառաշնորհակալ ենք կառավարութեան, որ այդպէս տառապանքի լուծը գնելով եւ յոյների վրայ՝ մեղ աւելի կը մտնեցնէ ու կը միացնէ անոնց. եւ այս առաջին փորձը չէ, որ թիւրքը կը գործադրէ Գուժ-Գալուժի հանրածանօթ ցոյցէն սկսեալ մինչեւ այսօր քանի-քանի անգամ յոյներն ալ մեղ հետ իբր խուժարար բանտարկեց ու արտօրեց. մաղթենք աւելի մեծ միութիւն յոյներու հետ միևնոյն ճնշող լուծի դէմ:

Վերջիչեալ ձերբակալութիւններէ յետոյ կառավարութիւնը սկսաւ մի շարք մանրազնին յարձակողական խուզարկութիւններ, որոնց թիւը 15-ի մօտ է: Այդ խուզարկութիւններու նպատակն էր գտնել ոչ միայն խուժարար թղթեր ու գրքեր, այլ և գտնել փախտական յեղափոխականներ ու ասպատակներ. ձերբախտական յեղափոխականներ ու ասպատակներ, 20 կալել նաև տեղացի 10-12-ի մօտ երիտասարդներ, 20 էն մինչև 28 տարեկան, որոնք կը պատկանին կրթուած ուսեալ դասակարգին. եւ կառավարութիւնը կուզէ հաւատացնել իրեն, թէ դահա՛ անպատճառ ուսեալներէն պէտք է կործանի: Սա մեր մամերու դարեւոր տուածն է, որու համեմատ կառավարութիւնն ալ կուզէ ուսեալ դասակարգն ձերբակալել ու պատժել աղոնց վերագրելով իր քայքայուած աշխարհի զարգացման բնական հոսանքէն տաջ եկած կործանումը: Բարբաղաբար

չեն աջողած ձեռք ձգել այդ երիտասարդներէն ոչ մէկն. ամենքը անհետացել են կառավարութեան յօշոտիչ ճանկերուն մէջ չիյնալու համար, մինչդեռ միւս կողմէ կառավարութիւնը մեծ երկիւղի ու մոլեգնութեան մէջ է, որ չըլլայ թէ այդ անյայտները իր գլխին մեծ օյ ին մը խաղան:

Այդ բոլորի մէջ կառավարութիւնը շատ ճիգ թափեց ձեռք ձգել Ղեւոնդ Թղլեան, բնիկ Չոր-Մարզուանցի 23 տարեկան ուսեալ երիտասարդն, որը միաժամանակ իր գիւղը վարժապետութիւն արած էր, իսկ այժմ նարնջի վաճառականի գրագիր էր: Ասոր տուելը չըջապատուած էր թիւրք լոտեաներով կառավարութիւնը երեք անգամ խիստ յարձակում գործեց ձերբակալելու եւ խուզարկելու համար, բայց երեք անգամին ալ ապարդիւն ելաւ. Ղեւոնդը անյայտ էր, տանը մէջ միայն ծերունի մայրը կար: Եւ ոչ մի վստակար թուղթ չի գտնուելով, ոստիկանապետը կը գոչէր, այն ոստիկանապետը, որ ասոր տան վրայ յարձակելու համար 30 հոգիէն պակաս մարդ չէր տաներ, ոստիկան եւ պաշտպանութիւնը թիւրքեր. ոչան լակոտ, դուն վարժապետ եղեր ես եւ հիմա ալ գրագիր, ահա կաղամբը եւ գրիչը, դոնէ ձերմակ թուղթն ալ չի կայ տանդ մէջ: Ի վերջոյ այդ յուսահարութեան մէջ ձերբակալեցին Ղեւոնդի Սարգիս անուն մեծ եղբայրը, որ իրմէ 5 տարի է զտուած էր եւ ոյլ տեղ կը բնակի. ճանապարհին ոստիկանները շատ կը նեղեն եւ կստիպեն, որ եղբորն ուր լինելը յայտնէ. բայց խեղճ մարդը կը պատասխանէ թէ «ես հինգ տարի է զտուած եմ իրմէ եւ անոր գործերուն առնչութիւն չունիմ, որ ուր երթալը գիտնամ. երկու-երեք ամիսէ հետէ անիկա տեսած չեմ:»

Օրիձաղելին այն է, որ ոստիկանապետը աղուէսական խորամանկութեամբ կը խնդրէ Սարգիսին «գիտեմ այստեղ է ինքը, թող չի վախնայ դայ. սա մեր ընչացքին, յօրուքին կեղտոտեցէք եթէ իրեն մի բան անենք, լոկ մի բան պետք է հարցնենք եւ տպա ազատ թողունք:» բայց հասկանալով Սարգիս անգիտակցութիւնը կէս ճանապարհին թող կը տայ:

Այն ծիծաղելի ոստիկանապետը, որ մեծ ջանք ունի իր առատաբերութիւններն մեծ ծառայութիւն մատուցանելու, որպէս զի անոր մի փայլուն շքանշանը շողողացնէ իր կուրծքի վրայ, իր ապարդիւն ելած ջանքերէն յետոյ ծիծաղելի կերպով կը յայտարարէ. «Դիւքար, ես գիտեմ թէ դեռ ովքեր են յեղափոխականներ ու ասպատակներ, բայց ինչ անեմ որ ետեւս քիչ մարդ կայ. 30 մարդը քիչ է. 7-ի դէմ 700 հարկաւոր է, այդ փորձը Մարզուանի մէջ արին. ասով եթէ կոխեմ, այդ «Ֆէտաի» ները անհաւատներ են, վերջը մարդը տիկ կը հանեն:» Ահա կառավարութիւն, որ չը նայելով թէ մէկիկ մէկիկ բանտ կը տանի գիւղացիներն, դարձեալ կը վախնայ անոնց շուքերէն:

Այսպէս անհետացողներն երկրէն դուրս չի հանելով ձերբակալելու մանաւանդ աւելի ազատ գործ տեսնելու համար հաստատեցին քառամետրոսարանը երբ այս կողմեր հետախու չի կար: Երկրի ամբողջ թիւրք ազգաբնակչութիւնը տէրունական օրէնքով լոտես ու ոստիկան դարձած է. ամեն մի թիւրք պատահած հայուն, պատահած ճանապարհորդին կրաւունք ունի խուզարկելու.

եւ ձերբակալելու: Օրէնք ու կրաւունք ըսուածները իսպառ վերացած են. կամայականութիւնն է որ կը տիրէ գիւղացիները անտեսական կատարեալ սնանկութեան մատուցան. առեւտուրը կասած է ամեն բան դին չունի ինչ որ գիւղացին ունի. իսկ դրսի պետքերը հոգալու համար գիւղացին փող չունի:

Աոր օր նոր խուզարկութիւններ, նոր ձերբակալութիւններ. ահա այս է այս կողմերու ներկայ վիճակը:

Ալէքսանդրէտի բանտարկեալները կը մնան դեռ Ատանա: Ազատուցան միայն 4 հոգի: Աւաճառական քերով բէ քէ շի շեանի եւ կօշկակար հաճի Եղիա Պետեվեանի անմեղութիւնը հաստատուելով հանդերձ, հազիւ կարողացած են 35 ոսկով ազատ արձակուիլ: Արձակուած են նաև Ալէքսանդրէտցի Յակոբ Սաչագլեանը եւ յայտնի յոյն վաճառական Իպրահիմ Չըրըլի եղբայրը, որոնք վերջը դարձեալ հայկական խնդրոյ համար բանտարկուած էին Ատանա: Ալէքսանդրէտի հայերն զրպարտողն ու մատնողն է շայրապետ Պալեան (Օհանես Պալեանի եղբորորդին), այն երեք փաստաբաններէն մին, որոնք առաջ Ատանա տարին: Այս վատահոգի եւ շահամոլ փաստաբանը կը զրպարտէ Ալէքսանդրէտի հայերն, իբր թելսորիչ Գարանլըգ-Գափուի դէպքին, մանաւանդ որպէս թէ ազոնք եղած ըլլան Երուսա փախցնողը Գրիգոր Ճապրաբան անուն Ալէքսանդրէտցի հայը որը կարծուի ըլլալ թելադրիչներէն մէկը: Բայց ստուգուած է շայրապետի խօսքերու զրպարտութիւն ըլլալը բանտարկեալներու կողմէն եւ սակայն կառավարութիւնը չուզեր ոչ որին ազատ արձակել: Ամբողջ խնդիրը փակելու համար կը պահանջուի 250 ոսկի. սա այժմ բոլոր Ատանա բանտարկեալներու թիւը կը հասնի 23-ի, անհետացողներէ զատ:

Բէյլանի մէջ կրկին մի նոր դէպք պատահեցաւ, որը տեղի տուաւ շարք մը նոր ձերբակալութիւններու: Մի քանի տաճիկներ միացած մի նամակ կը գրեն տեղակալին հետեւեալ պարունակութեամբ. «Ահ հասած է ձեր վերջին օրերը. մենք սնանկացանք. աղքատութիւնը մշտական հիւր դարձաւ մեզ. ալ բաւական են մեր վրայ դրուած ծանր տուրքերը եւ:»

Այն նամակը կը յանձնեն մի խեղճ, տգէտ, գիր չի հասկող հայու եւ կը պատուիրեն, որ տանի շուկային մէջ մզկիթի առջեւ ձգէ. կսպառնան նաև որ եթէ մէկին խօսի անպատճառ կսպանեն ինքը: Ողորմելի հայը իրենց պատուէրի համաձայն կը տանի եւ մզկիթի առաջ կը ձգէ. բայց դժբաղդաբար ձգած պահուն ոստիկանները տեսնելով կառնեն նամակը եւ ինքն ալ կը ձերբակալեն:

Հարցաքննութեան ժամանակ հայը վախէն կուրանայ յայտնել իսկական տուողները: Կառավարութիւնը, որ միշտ առիթ կը փնտռէ նոր նոր խնդիրներով հայերն ձնշելու, եւ մանաւանդ չուզեր տաճիկներուն վերագրել, որպէս զի մի գուցէ չի յուզուի նոյնպէս սրնանկացած թուրք ամբողջը, հայերուս կը վերագրէ այդ թղթի հեղինակութիւնը. բայց չի գիտնալով անտորագիր թղթի հեղինակներու անունները կը խորհին եւ կը յայտնեն թէ այս գիրը կը նմանի մի քանի հայերու գրերու, որոնց ձերբակալեցին ընդամենը 8

Տողի: Իսկ յետոյ հայերէն բոլոր այբուբէն գիտողն-
բըս կուզեն ձերբակալել:

Ասոնցմէ 16 Տողի Հայ-Լեւո կը փախչին ու կան-
հետանան: Այս պատճառաւ կը ձերբակալեն նաեւ
Բէյլանէն 3 ժամ հետի Ա մ ու Գ Օ վ ա յ ի դաշտին
ծայրը գտնուած Ղ Ը Բ Ե Խ ա ն է ն 13 Տողի որը
Բէյլանցիներէ հաստատուած 50 տուն գուտ հայ բնա-
կիչ ունի: Բոլոր ձերբակալուածներն կուղարկեն Հ ա-
Լ է Կ ու Ե ր կը մնան ցարդ:

Ի չ կ Կ է զ ի մէջ ալ որ Հայ-Լեւոն վրայ է եւ
տունի 200 տուն հայ բնակիչ ձերբակալած են Պ ե տ-
ր ո ս աղան, Ղ օ Ճ օ Ղ Լ Ի Պ ա ր ա Կ Ե տ աղան եւ
բողոքական հայերու քարոզիչ Ա Բ Ե ր ա Տ ա մ խօսման:
Ասոնք եւ ձերբակալուած եւ բանտն են 2 ամիսէ
ի վեր հայկական խնդրոյ առթիւ:

Ա Տ ա Կ ի ի կ ի Կ յ ի վիճակը Կ ի ի կ ի Կ ի Կ ի Կ ի Կ ի Կ ի
ւորական պաշարման մէջ է:

ՏՈՐՈՒՑԻ

Ամսօր, 15 նոյեմբեր 94

Տեղւոյս կառավարութեան եւ մասնաւորապէս Պե-
քիր փաշայի կրած սարսափը յեղափոխականներէն եւ
նոցա արած անընդհատ շարժումներէն, կառավարութեան
ինչ ստորին միջոցներու ձեռնարկելը զսպելու համար
յեղափոխութիւնը, հակառակ իր այնչափ աշարուջ
հսկողութեան ու բազմաթիւ վարձկան լրտեսներու բա-
նակին եւ 100-էն ւելի անդրի յեղափոխական կար-
ծածներու բանտարկութեան, — ի՞նչ այդ գործածած միջոց-
ները ահա մենք կուզենք նկարագրել:

Տեղւոյս բանտին մէջ դատապարտեալ ոճրագործ,
գող, շնացող եւ այլ յանցապարտ չէրբէզներ ազատ
արձակելով եւ չէրբէզ պէյերու զանազան նուէրներ
տալով չէրբէզ տարրին համակրութիւնը շահեցաւ եւ
անոնցմէ իւրը 1,500 «համիտի» գուլդ մը կազմեց
գործածելու համար մասնաւորապէս հայ յեղափո-
խականաց դէմ:

Մի օր տեղւոյս հայ աղաները հանդերձ չորս հայ
քահանաներ Պեքիր փաշան կը կանչէ իր քով եւ
չստ մը կեղծաւոր եւ շողքորթ խօսքեր ուղղելէ յե-
տոյ ուզած է ի վաղուց հետէ փախստական դարձած
ինք երիտասարդներ, եւ ազգը այս ներկայ խեղճութե-
նէն ազատելու համար պէտք է երգում ընել տաք
այբողջ հայերուն եւ այդպիսով կազատիք ձեր թշուա-
ռութենէն, կըսէ: Ժողովը պատասխանած է թէ մենք անոնց
ոք ըլլալը չենք գիտեր եւ մեր կրօնքը չէ թոյլատը-
րել երգում ընել եւ երգում տալ: Այս պատասխա-
նին վրայ կը բարկանայ եւ կառաջարկէ որ անգամ
մալ խորհին անանձին իւր պատասխան մը բերեն:

Բանի մը օր յետոյ դարձեալ կանչելով ժողովը
պատասխան կուզէ իր նախորդ արաջարկութեան եւ
նոյն պատասխանն կընդունի: Երբ կը տեսնէ որ այդ չի
յաջողեցաւ ուրիշ արաջարկութիւն մը կընէ քանի որ
կրօնքը կարգիլէ երգումը պէտք է որ ստորագրութիւն
ժողովի հայ ժողովուրդէն, յայտնելով կատարեալ հպա-
տակութիւն եւ հաւատարմութիւն առ կառավարու-
թիւն, յայց ժողովը չենդունի: Եւ անհարին սեպտեմբր
ազոր զործադրութիւնը կը ձգուի: Եւ անոր յետոյ
ժողովը կը

ծանուցանէ, որ բանտարկեալ ք վաղը Եօղատ պիտի
ղկուին եւ հոն պիտի դատուին: ու հետեւեալ օր պատ-
րաստութիւններ տեսնուելով՝ կայերով կայանքներով
հետզհետէ ղրկուեցան Եօղատ բազմաթիւ ոստիկանօք
եւ համիտի հեծելազօրօք: Եայց հեռագրուրի մը հա-
մաձայն ոմանք դեռ Եօղատ չի հասած վերադարձու-
ցին ձանապարհին եւ թարկելով զանազան անձանքներ
ու եւ ղրին դարձեալ բանտ արդէն նախորդ նամա-
կաւ ընթերցողաց ծանօթացուցած էինք: Եոյն օրը քէօփ
րիւն 40 եւ Մարզուանէն 35-ի չափ մնացորդ բան-
տարկեալներն ալ բերին հոս եւ անբաւական լինելով
բանտը տան մը մէջ դրուեցան ի հարկէ խիստ հսկո-
ղութեան տակ:

Ղարձեալ կանչելով ժողովը մի քանի օր յետոյ,
Պեքիր փաշան կըսէ. քանի որ դուք իմ բոլոր խա-
ղաղասէր միջոցներս մերժեցիք երկու օր յետոյ ղրկու-
րական ատեանի անդամք հոս պիտի գան եւ զձեզ պի-
տի ներկայացնեմ այդ ժողովն առջեւ: Բոլոր աղաներ
գիտնալով Պեքիր փաշայի չափազանց կաշառակերու-
թիւնը պատասխանեցին թէ, ինչ որ կուզես կրնաս ը-
նել այս պատասխանին վրայ առաւել եւս զայրացաւ:
Երկու օր յետոյ Եւրոպիայէն գալով Սերաստիոյ կու-
տակալ Խալիլ պէյը Եւրոպիա հաստատեալ ղրկուրական
տոեանի նախագահ Ֆէրիզ փաշայի ընկերակցութեամբ
փոխանակ բանտարկեալները դատելու հոկտեմբեր 1-2
ին բարեխնամ սուլթանի ներդրամութեամբը (°) ա-
ղատ արձակուեցան քիչ ժամանակէն վերջ կրկին ձեր-
բակալելու գիտումով:

Այս օրեր երբ երկու հայեր խանութի մը մէջ
իրարու հետ կը խօսէին, մէկը «մարդուն» բառը ար-
տասնած միջոցին ոստիկան մը կանցնի եւ «մարդուն»
հասկանալով եւ օր մը առաջ պահականոցէ մը գող-
ցուած մարդին վերագրելով խօսակցութիւնը լուր կու-
ցուցաւ կառավարութեան, որոնք անմիջապէս կը բանտար-
տայ կառավարութեան, որոնք անմիջապէս կը բանտար-
կուին անոնցմէ մին Մկրտիչ Չալքուճեան 55 տա լեզան
կուին անոնցմէ մին Մկրտիչ Չալքուճեան 55 տա լեզան
անձը բանտի մէջ գանակոծման ենթարկուելէ վերջ,
որչուած է մի օտար քաղաք արտօրել անոնց
հարցարնութեան:

Այն անձինքներէն մէկ քանին, որոնք առաջ ար-
ձակուած էին բանտէն առանց պատճառի, կրկին դըր-
ուեցան բանտ: Պեքիր փաշան կանչելով իր մօտ բո-
ղոքականաց քարոզիչը հանդերձ մի քանի բողոքական-
ներով ըսած է: յաճախ նայելով այս բոլոր բան-
տարկեալները իբր թէ երոպական դիպատներու մի-
ջոցաւ արձակուած լինին դարձեալ բանտարկելու վրայ
եմ, եթէ կարող են կրկին թող ազատեն. եւ թէ ձեր
մէջ յեղափոխութիւն քարոզող կիներ կան եղբ, իր-
օտեցեք զանոնք, եթէ որ պատճելու կերպը գիտեմ
որչեալ անձերով վկե պիտի տամ զանոնք:

Պեքիր փաշան ուրիշ անգամներ ալ կանչելով այդ
հայ աղաներ, քանիցս սպառնալիքներ ուղղած է նոցա:
Պեքիր փաշայի բաղձանքն էր բոլոր իւր իշխանութեան
տակ ունենալ այց ինչպէս եղաւ այդ կառավարական
ձայն յանուն պէս պահուի ու գող աղաներն այսօր
համարձակ եւ յանդուգն պատասխաններ կուղղեն:

Մինչ կառավարութեան զօրաւոր եւ իշխող մասը
զբաղած է յեղափոխականաց յարուցած խնդիրներով
միւս կողմէն ոստիկանապետներ եւ ոստիկաններ քաղցած

